Լրատու Newsletter

ԳԷՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk
Website: www.armenianschool.org.uk

Մարտ 2023
Լրատու թիւ 26

Ողջոյնի Խօսք

ԱՆԻ

ՎԱՆ

ԿԱՐՍ

2023 թւականը Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանի համար յոբելենական տարի է, այս տարի լրանում է մեր սիրելի վարժարանի հիմնադրման 45-ամեակը: Վարժարանը 45 տարիներ շարունա հոգաբարձուների, տնօրէնների, ուսուցիչների, կրթական և ծնողական յանձնախմբի անդամների, վարժարանի բարերարների համատեղ աշխատանքների շնորհիւ, Հայրենիքից հեռու՝ օտար ափերում, կրթել և դաստիարակել է բրիտանահայ երեխաներին մեր ազգային ոգով: Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանը միայն հայոց լեզու և հայկական մշակոյթ փոխանցող կառոյց չէ, այլ մեր երեխաների սրտերում հայրենասիրութեան հունդեր սերմանող, հայ ինքնութեան և հայկական մթնոլորդ պահող սրբազան օջախ է: Ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել, բոլոր նրանց, որոնց տքնաջան, նուիրուած աշխատանքի շնորհիւ մեր վարժարանն անցաւ այս 45 տարուայ փառահեղ ճանապարհը: Շնորհաւորում եմ բոլորիս վարժարանի հիմնադրման 45 ամեակի առթիւ:

2023 թւականի յունուարի 8-ին սկսեցինք 2022-23 ուսումնական տարուայ երկրորդ եռամսեակի աշխատանքները:

Այս ընթացքում փետրուարի 12-ին տօնեցինք «Վարդանանց» հերոսամարտի 1572 ամեակը:

Ծնողական յանձնախումբը և հոգաբարձուները մարտի 4-ին կազմակերպեցին "Ընդհանուր գիտելիքի մրցոյթ" ձեռնարկը:

Մարտի 19-ին և 26-ին իններորդ դասարանների աշակերտները յանձնեցին հայոց լեզուի գրաւոր, բանաւոր և կարդալու աւարտական քննութիւնները: Յատուկ շնորհակալութիւն Կրթական յանձնախմբի ատենապետուհի Սիլվա Շամմասեանին, Վարժարանի Խնամակալութեան ատենապետ և Կրթական յանձնախմբի անդամ Դկտ Գառնիկ Թարվերդիին, Կրթական յանձնախմբի անդամ Կարինէ Աւետիսեանին, որ անցկացրեցին աւարտական քննութիւնները:

Մարտի 19-ին տօնեցինք մայրերի օրը, իսկ մարտի 26-ին Սուրբ Զատիկը:

2022-23 ուսումնական տարուայ երկրորդ եռամսեակի ընթացքում կատարուած աշխատանքների մասին Դուք կը կարդաք այս համարում: Ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել այս ամսագրի պատասխանատուներին՝ Լենա Գիւլխանճեանին, Գայանէ Յակոբեանին, Ստելլա Թարվերդիին, Մարինա Մարդանեանին:

2023թ մարտի 26-ին աւարտուեց երկրորդ եռամսեակը: Զատկական տօների առթիւ ապրիլի 2-ին և ապրիլի 9-ին վարժարանի արձակուրդներ են: 2023թ ապրիլի 16-ին կը վերսկսեն վարժարանի երրորդ եռամսեակի աշխատանքները:

Սիրելի աշակերտներ և ուսուցիչներ, յարգելի ծնողներ շնորհաւորելով Սուրբ Յարութեան տօնի առթիւ մաղթում եմ բոլորիդ և Ձեր ընտանիքներին քաջառողջութիւն, յաջողութիւններ, անձնական երջանկութիւն:

Վարժարանի տնօրինուհի
Ռուզաննա Թաթուլեան

Սուրբ Վարդանանց Տօն

Փետրվարի 12-ին, Գևորգ Թահթայան Կիրակնօրյա Ազգային վարժարանը նշեց արդեն ավանդույթ դարձած «Վարդանանց» հերոսամարտի տարեդարձը: «Վարդանանց» հերոսամարտը հայ ժողովրդի ազատագրական պայքարի փայլուն էջերից մեկն է: Այս տարի լրացավ Ավարայրի ճակատամարտի 1572 ամեակը: 1572 տարի է անցել Վարդանանց պատերազմից, սակայն նրա ոգին ու զորությունն այնքան հզոր է և տպաւորիչ, որ դարեր շարունակ մեր ժողովուրդը ոգեշնչվելով Վարդանանց հերոսների կերպարներով պայքարել է հանուն հայրենիքի ազատության և անկախության: Դպրոցի տնօրենուհի՝ Տիկին Թաթուլյանը ներկայացրեց «Վարդանանց» տոնի խորհուրդը, նրա պատմական դերն ու նշանակությունը:

Այնուհետև դպրոցի բարձր դասարանի աշակերտները, գեղեցիկ մատուցմամբ, ներկայացրին օրվա խորհուրդը և Վարդան զորավարի կոչը զինվորներին:

Արևմտահայերեն դասարանների աշակերտները ներկայացրին հատվածներ Վահան Թեքեյանի «Խորհուրդ Վարդանանց» ստեղծագործությունից: Այնուհետեւ, խրոխտ ու գեղեցիկ երգով ելույթ ունեցան մանկապարտեզի սաներն և արևմտահայերեն դասարանների աշակերտները:

Միջին դասարանների աշակերտները ներկայացնելով «Ավարայրի ճակատամարտ»-ից մի փոքր պատկեր, մեզ տեղափոխեցին Ավարայրի դաշտը, Տղմուտ գետի ափը:

Հանդեսը եզրափակվեց վարժարանի երգչախմբի ելույթով, նրանք շատ գեղեցիկ կատարեցին Կոմիտասի «Իմ Հայրենյաց հոգի Վարդան» երգը:

On the 12th February 2023, the 1572nd anniversary of the Feast of Vartanantz was commemorated at school. An event that inspires us even after 1572 years and reminds us of the struggles we overcame to keep our national identity and culture.

This event was commemorated by all pupils with songs and poems to glorify our national hero and this sacred battle. The headteacher, Mrs Tatulian presented the message of the day.

Դպրոցէն ներս ունինք “Առաջարկներու Տուփ” մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:

Իններորդ դասարանի աւարտական քննութիւնները

Մարտի 20-ին և 27-ին տեղի ունեցան Վարժարանի աւարտական քննութիւնները:
Քննութիւնները անցկացուեցին երեք բաժիննե-րով՝ բանաւոր, գրաւոր, կարդալ և հարցերին պատասխանել:
Աշակերտները պատասխանատուութեան բարձր զգացումով մասնակցեցին քննութիւններին:
Քննական Յանձնախմբի անդամներն էին Սիլվա Շամմասեանը, Դոկ. Գառնիկ Թարվերդին և Կարինէ Յովհաննիսեանը:
Քննական բոլոր նիւթերը պատրաստել էր Սիլվա Շամմասեանը:
The final exams for the year nine leavers, have taken place on the 20th and 27th March. The students took the exams seriously and participated in the reading comprehension, written and oral exams prepared by Mrs Silva Shamassian who also invigilated the exams with Dr Karnik Tarverdi and Mrs Karine Hovanissyan.

Միջինք



Ինչպես գիտենք ամեն տարի Մեծ Պահքի 24դդ օրը հայ եկեղեցին նշում է Միջինքի օրը: Միջինքի հիմնական խորհուրդն այն է, որ Պահքը արդեն կիսվել է: Ըստ ժողովրդական ավանդության, հայ տանտիկինները պատրաստում են գաթա, որի մեջ մետաղադրամ են դնում: Այնուհետև հավասար չափով բաժանում են տան անդամների, կենդանիների և հողի միջև: Մետաղադրամը ում բաժին է ընկնում, նրա համար տարին հաջողակ է լինում:
Այս տարի Գէորգ Թահթաեան հայկական կիրակնօրյա դպրոցն էլ հետևեց ավանդույթին: Վարժարանի նախկին ուսուցչուհի տիկին Նազիկ Դիլանչեանը պատրաստել էր հայկական համեղ Ղափամա: Հատուկ շնորհակալություն ավանդական գաթաների նվիրատուներին:
Բոլոր ուսուցչական և ծնողական կազմը մասնակցեց ավանդույթին և ունեցան հետաքրքիր և հիշարժան օր:

Every year, on the 24th day of Great Lent, the Armenian Church marks the day of Mid-Lent. As per popular tradition, gata pastries are baked with a coin hidden within. When the pastry is shared, whoever gets the coin, will have a lucky and successful year.

This year, at Kevork Tahta Armenian Sunday School, the day was noted. Previous school teacher and an active member, Mrs Nazik Dilanjian prepared a delicious Ghapama and many ladies donated gata pastries to be sold in school. Everyone participated in this enjoyable event.

Մայրերի Օր

Մարտի 27-ին Անգլիայում մայրերի տոն էր. մեր վարժարանում նշեցինք այդ տոնը և մեր սաները սիրով բացիկներ պատրաստեցին իրենց սիրելի մայրիկների համար: Նրանք մեծ ոգևորությամբ և սիրով շնորհավորեցին մայրիկներն և անչափ ուրախացրեցին նրանց:

Չորրորդ դասարանի աշակերտները ուսուցչուհի՝ տիկին Քրիստինէ Նանյան, ոտանավորներ արտասանեցին և ծաղիկներ նվիրեցին իրենց մայրիկներին:

Մեր շատ սիրելի ծնողական հանձնախումբը մայրիկների համար անակնկալ էր պատրաստել, նրանք խաղարկության տոմսակներ բաժանեցին բոլոր մայրերին և համեղ շոկոլադ հյուրասիրեցին բոլորին:

On March 27th, Mothers' Day was celebrated at school. The young children made beautiful cards for their mothers which put a great smile on their mothers' faces when they received them happily.

Mrs Christine Nanyan's class, the Year 4 children, recited poems for their mothers and presented them with flowers.

Our beloved Parents' Committee members shared some chocolates with the mothers present at school and had a surprise prize draw for all the mothers – parents and teachers. Everyone was given a number and at the end of the lunch break, one lucky parent won the prize.

Սուրբ Զատիկ և Ուսուցիչների Հանդիպում

Ապրիլի 3ին մեր շատ սիրելի ծնողական հանձնախումբը Զատկական բազար էին կազմակերպել համեղ ուտեստներով և քաղցրավենիքներով: Նրանք հավկիթներ էին գույնել փոքրիկ աշակերտների համար և թաքցրել բակում: Աշակերտները փնտրում էին, գտնում և գտնելուց հետո հավկիթակռիվ խաղում: Երեխաները շատ ոգևորված էին և ուրախ վազվզում էին փորձելով հնարավորինս շատ հավկիթ գտնել:

Ծնողական հանձնախումբը նաև պասկաներ էին պատրաստել գեղեցիկ, գունագեղ զարդարանքներով, որոնք Զատկական տրամադրություն էին պարգևում բոլորիս:

Իսկ դասերից հետո նրանք գեղեցիկ ճաշկերույթ էին կազմակերպել դպրոցի նախկին և ներկա ուսուցիչների , առիթ ստեղծելով հանդիպել միմյանց հետ:

Հանդիպման ընթացքում տիկին Թաթուլյանը ողջունեց բոլորին, նշելով, որ Համանքային Խորհրդը, նախկին տնօրենները, հոգաբարձուները, նախկին և ներկա ուսուցիչները, ծնողական յանձնախմբերը և անհատ անձերը անգնահատելի դեր են ունեցել վարժարանի կայացման գործում:

Շնորհակալություն մեր շատ սիրելի ծնողական հանձնախմբին և հոգաբարձուներին, որ ջանք չեն խնայում գեղեցիկ միջոց առումներ կազմակերպել և առիթ ստեղծել հաճելի հանդիպումների:

On April 3rd, the Parents' Committee had organised an Easter Bazaar with lovely food and desserts. There were many coloured eggs for the children's egg hunt following by the traditional egg cracking game to see whose egg will stay unbroken. The children were very excited and searched for the eggs with great enthusiasm.

The Parents' Committee had also prepared beautyfully decorated Easter Paska breads that adorned the table and created a lovely Easter atmosphere,

After school, a luncheon was organised for former and current teachers to get together.

During the meeting, Mrs. Tatulyan greeted everyone, noting that the Community Council, governors, former headteachers, former and current teachers, parent committees, and individuals have played an invaluable role in the establishment of the school.

Thank you to our very dear Parents' Ccommittee and the governors, who spare no effort to organise beautiful events, to create an opportunity for pleasant meetings.

Շարունակուած

Աշակիրտների աշխատանք



Yeghishe Charents was an Armenian poet, writer and public activist. Charents' literary subject matter ranged from his experiences in the First World War, socialist revolution, and frequently Armenia and Armenians. He is recognised as "the main poet of the 20th century" in Armenia.

Եղիշէ Չարենցի 125 ամեակի առթիւ, 6-րդ դասարանի աշակերտների աշխատանքները։

Արեւմտահայ Ե դասարանի աշակերտ Լուսինէ Իւթիւճեան իր պատրաստած սահիկներով կրտսեր Ա եւ Բ դասարանին ներկայացուց Արեւն ու Ծիածանը հեքեաթը։
Լուսինէն համակարգչի տարբեր ծրագիրներ գործածելով գրաւիչ եւ հետաքրքրական աշխատանք մը արտադրեց, եւ անշուշտ, բոլորը հայերէ՛ն

2022-2023 Տարեշրջան

Առաջին Եռամսեակ 11 Սեպտ. 2022 – 11 Դեկտ. 2022 Term I 12 September 2022 – 12 December 2022	
11 Սեպտեմբեր 11 September	Վերամուտ Back to school
16 Հոկտեմբեր 16 October	Մշակոյթի Օր - Թարգմանչաց Տօն Culture Day
23 Հոկտեմբեր 23 October	Արձակուրդ Half-Term Break
27 Նոյեմբեր 27 November	Ծնողական Ընդհանուր Ժողով Parents' Meeting
11 Դեկտեմբեր 11 December	Նոր Տարուայ Հանդէս New Year's Celebration
Երկրորդ Եռամսեակ 8 Յունուար 2023 – 26 Մարտ 2023 Term II 8 January 2023 – 26 March 2023	
22 January	Open Day
12 Փետրուար 12 February	Վարդանանց Տօն St Vartan's Day
19 Փետրուար 19 February	Արձակուրդ Half-Term Break
4 Մարտ 4 March	Ընդհանուր Գիտելիքներու Մրցում Quiz Night
19 Մարտ 19 March	Մայրերու Օր Mothers' Day and Open Day
26 Մարտ 26 March	Զատկուայ Հանդէս Easter Celebration
Երրորդ Եռամսեակ 16 Ապրիլ 2023 –9 Յուլիս 2023 Term III 16 April 2023 – 9 July 2023	
7 Մայիս 7 May	Աշակերտական գիտելիքներու մրցում Quiz for students
14 May	Open Day
11 June	Open Day
25 Յունիս 25 June	Ամավերջի Հանդէս End of Year Assembly
2 Յուլիս 2 July	Մարզական Օր - Sports' Day Դաշտահանդէս - School BBQ

Խմբագիրներ՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան, Տիկ Գայանէ Յակոբեան,
Տիկ Ստելլա Թարվերդի, Տիկ Մարինա Մարդանեան
Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան
Անգլերէն եւ Էջադրում՝ Տիկ Լենա Գիւլխանճեան